Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար դյուրակիր համակարգչի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/14 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

21 փետրվարի 2023թ.
ժամը՝ 14.30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Պարսիլյան, Ա. Մանուկյան, Վ. Քեռյան, Տ. Բաղալյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Հովհաննիսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)*
1	դյուրակիր համակարգիչ	550000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 20.02.2023թ.-ին ժամը 14:30-ին:
էլեկտրոնային 21.02.2023 թ.-ին ժամը 14:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«Սի-Սի գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Պ. Սևակի փ. 8, շ.2 բն. 56	/+374/ 41438888	-
2	«ՍԵԳ» ՍՊԸ	ք. Երևան, Կուրղինյան նրբ.6շ., բն.32	/+374/ 11369000, 77660786, 55019060	seg_tender@mail.ru

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/14 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Սի-Սի գրուպ» ՍՊԸ	7,777,777,777	0 %	7,777,777,777	544203	0%	544203	
2	«ՍԵԳ» ՍՊԸ	549,700	0 %	549,700	549700	0 %	549700	

7. Նիստը կասեցնելու վերաբերյալ

Փաստաթղթերը ուսումնասիրելու նպատակով որոշեց նիստը կասեցնել մինչև 22.02.2023թ. ժամը 15:45-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

22.02.2023թ. ժամը 15:45-ին կայացած նիստում Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Սի-Սի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

1. eauction.armeps.am համակարգում «Ապրանքային նշան», «Արտադրող» սյունակները լրացված չեն: «Տեխնիկական բնութագիր» դաշտում հստակեցնել «Անկյունագիծ՝ **առնվազն 13.3**», «Օպերատիվ հիշողություն (RAM) **առնվազն՝ 8 GB**», «Քեշ հիշողություն՝ **առնվազն 12 MB**», «SSD կուտակիչ՝ **առնվազն 256 GB**», «Հիշողության հաճախականություն՝ **առնվազն 3733 MHz**», «Մարտկոցի հզորություն՝ **առնվազն 49.9 Վտ-ժ**», «Չափսեր՝ **առնվազն 30.41 x 21.24 x 1.61 սմ**», «Քաշ՝ **առավելագույնը 1.5 կգ**» ձևակերպումները: Նույն դաշտում բացակայում է երաշխիքային ժամկետը և ապրանքի **նոր** կամ **օգտագործված** լինելու փաստը:

2. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր: (...):»:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Երևան համայնքի վարչական շրջանների սահմանները որոշվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով: (...):»:

Մասնակիցն «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում»՝ 4-րդ բաժնի 4.3 և 4.4 ենթաբաժինների համապատասխանաբար 4.3.3 և 4.4.3 կետերում լրացրել է «Արաբկիր» բառը, ուստի առաջարկում ենք «Արաբկիր» բառը փոխարինել «Երևան» բառով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ առաջարկելով Ընթացակարգի մասնակից՝ «Սի-Սի գրուպ» ՍՊԸ -ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 28.02.2023թ. ժամը 12:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 28.02.2023թ. ժամը 12:30-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «Սի-Սի գրուպ» ՍՊԸ-ն շտկումը կատարել է մասնակի, մասնավորապես՝ eauction.armeps.am համակարգում լրացրել է միայն «Ապրանքային նշան» և «Արտադրող» սյունակները: Հետևաբար մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝ ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով «Սի-Սի գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

11. Տեղեկություն Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

11.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած:

11.2 Հաստատել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/14 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Վ. Թորոսյան
անդամներ՝	_____	Տ. Պարսիլյան
	_____	Ա. Մանուկյան
	_____	Վ. Քեռյան
	_____	Տ. Բաղալյան
քարտուղար՝	_____	Ռ. Հովհաննիսյան